

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն)
Կայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր ըստ 2 կոպեկի.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻՎԱԿԱՆԻՆ ՄՇԱԿ 20-րդ ՏԱՐԻ 20-րդ ՏԱՐԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԿՈՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱՊԵՏՈՒՆԵՐ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսանը՝ 9 ռ., ինն և ութ ամսանը՝ 8 ռ., եօթ ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը՝ 5 ռ., չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3 ռ., երկու ամսանը՝ 2 ռ., մի ամսանը՝ 1 ռուբլի:
Գրելով «ՄՇԱԿ» կարելի է խոստովանել (Բարձրագույն և բարձրագույն փողոցների անկյունում, Թատարական տանը).
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրելու համար պէտք է գրիմը հետևել հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».
Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառերն փոխարինվում են 2 կոպեկի.
«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններն չեն տպագրվում, այլ տպագրվում են միմյանց լրագրողների յայտարարութիւնները, մասնաւորապէս և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մասնաւորապէս տպագրվում առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և քսան երեսի վրա՝ 2 ռուբլի:
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կաթողիկոսական թեմականներ. Նամակ Ախալքալաքից. Նամակ Աղստաֆայից. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բերկին բանտարկան շարժումները. Խորեն Նարեկ և Ազգական. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՊԵՏՈՒՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆՈՒՆԵՐ

Կաթողիկոսական ընտրութիւնների առիթով «Մուրճ» իր 1891 թ. № 9-ում արտայայտվեց այս մտքով, որ «ընտրութեան բարձրութեան վրա կանգնած նա ծանաչում է միայն մի անձն անգուղական Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանին»: Այժմ նոյն անգուղական շարժումներն են իր դատողութիւնները հետևել կերպով:
«Ինչ է նշանակում» ընտրութեան բարձրութեան վրա կանգնած լինելը: Ներկայ դեպքում այդ պէտք է հասկանալ այսպէս, որ միմյանց Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանն է, որի անցեալը և որի բարոյական էութիւնը, որի քաղաքական դատարանը լիապէս զրաւական են, որ նա թէ հեղինակութեան կարող է ներկայացնել կաթողիկոսական դահլիճ վեհութիւնը և թէ բաւարարութիւն տալ այն պահանջներին, որ կարող է անել ժամանակակից յառաջդիմական ոգին:
«Միմյանց Խրիմեանն է, որ իր բեղմնաւոր անցեալով ստացել է ընդհանուր հայկական զործողի նշանակութիւն: Նրա անունը զործող է ամեն հայի սրտում: Իր հարուստ զործունեութեան մէջ նա իմացել է ղեկավարել ազգային ընդհանուր շահերի տեսակետից այնպէս, որ նրա ձեռնառմանը վախճանը կարող էր միայն յառաջդիմութիւն լինել: Եւ այդ պատճառով ինչ կար մեղանում յառաջդիմական — համակրել է եղել Խրիմեանին և Խրիմեանը համակրել է եղել յառաջդիմականներին:
«Այն ոգին, որը մեծացրել է Խրիմեանի անունը և զարթոյն նրան հանրահայկական, բոլորական ոգեւորութեան ծնունդ է եղել: Ներշնչվելու աղբիւրը, ինչպէս երևում է, Խրիմեանի համար անպառ է. ահա ինչու իր ծերութեան հասակում Խրիմեանը նոյնն է, ինչ նա էր երիտասարդ հասակում վարդապետ ժամանակ: Խրիմեանը միշտ եղել է ինքը իրան հաւատարիմ: Նա էր զաւարտարի մարդ և մնացել է զաւար-

ծուին, «Մուրճ» իր կարծիքը արդէն յայտնել է բայց դա դեռ չի խօսացել երկրորդի մասին և չի խօսացել չորս առաջարկելիք ընտրելիների ցանկի մասին:
«Չորս ընտրելիները անկապած պէտք է այնպիսի անձեր լինեն, որ երեք վերջինները առաջին կաթողիկոսացուի ուղղութեանը յարմար զանաւ լինեն: Խրիմեանի անունը մէջ մենք դադարեցնել պաշտօնական կարգի է ուրեմն որ չորս կաթողիկոսացու ընտրելի ցանկի մէջ մեզանք իրանց ուղղութեանը, ոգով տարբեր կամ հակառակ ձանաչված հոգեւորականների անուններ: Ուրեմն ցանկի մէջ պէտք է մեզանք անուններ երեք կարեւորագոյն եպիսկոպոսների, որոնք հակախրիմեանական չեն իրանց ոգով, ուղղութեանով, որոնք կարող են ազգի բարոյական պաշտպանութեան վրա յոյս դնել թէ իրանց մասնաւոր արժանաւորութիւնների պատճառով և թէ իր ազգի առաջին ընտրելի կողմնակիցներ:
«Կաթողիկոսացուների ցուցակը կազմելու առաջին և գլխաւոր պայմանն են համարում այդ:
«Որպէս զի այս սկզբունքով մենք կարողանանք այժմ և եթ մի ցանկ առաջարկել, անհրաժեշտ է լաւ ծանաչել այն բոլոր անձնաւորութիւններին, որոնք առհասարակ կարող են այդ անսակեաներից իրաւունք ունենալ ցանկի մէջ մտնելու:
«Թող սակայն չը մեղադրեն մեզ մեր ընթերցողները, եթ նրանց պարզ խոստովանելու լինենք, որ ընդհանրութեան հետ և մենք այնքան չենք ծանաչում մեր բոլոր հոգեւորականներին, որ կարողանանք այժմ մեանք վերջնականապէս միջնաւ թէ ով ումից զերազանելի է Խրիմեանի հետ անմիջապէս յիշելու ցանկի մէջ:
«Իրաւունք վերապահելով վերադառնալ այդ խնդրին, մասնաւորապէս որ կաթողիկոսական ընտրութիւնները մեզնից երեք ամիս հետո են, մենք կարող ենք առայժմ միայն ընդհանրապէս յիշատակել հետեւեալ անունները, որոնք որոշ չափով իրաւունք ունեն ընդհանրութեան համակրութիւնը վայելելու, ուրեմն չորս կաթողիկոսական կանդիդատների ցանկի մէջ տեղ ունենալու:
«Մեր ծանաչածով առաւելագոյնց այդ համակրութեանը արժանի են այժմեայ տեղակալ զեր. Ներսիս եպիսկոպ. Գալստեան և Արիստակէս եպիսկ. Սեդրակեան. Թիւրքահայերից՝ մեր, կրկնում ենք, Թերի տեղեկութիւնների համեմատ՝ այդ համակրութեանը արժանի են Մատթէոս Խոյմբեան և Գրիգորիս Ալեքսանդրեան եպիսկոպոսները:
«Բայց վճռվել յօգուտ մէկի կամ միւսի, որպէս և երկրորդ կաթողիկոսացուի, մենք այժմեայ ընտրութեան չենք կարող: Գործ համար մեզ հարկաւոր են աւելի լիակատար տեղեկութիւններ, քան մենք ունենք, մասնաւորապէս տաճկահայ եպիսկոպոսների նկատմամբ: Մի բան միայն աւելի հաստատ կարող ենք վկայել, որ առաւել հայ եպիսկոպոսներից նա, որը, համապատասխանելով մեր վերջ յիշած ծրագրի տեսակետին, ամենից շատ ժողովրդի կողմից պաշտպանութեան վրա յոյս դնել կարող է, Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն է:
«Մեր խնդրը այս է թէ ովքեր պէտք է լինեն առաջարկվելիք չորս թեմականները և նոյնից որ երկուսը պէտք է լինեն առաջին և երկրորդ թեմականներ:
«Ինչ վերաբերում է առաջին թեմական-

թեման կողմից: Պատարագից յետոյ՝ ժամը 11-ին սկսվեց ընտրութիւնը: Նախագահում էր գործակալ քահանայ: Նախապէս կարդացվեցան ընտրութեան վերաբերեալ կանոնները և զրույթները, յետոյ որոշվեց ընտրողների ներկայ գտնվող թիւը և երբ յայտնվեց, որ 53 ընտրողների ներկայութիւնը իրաւունք է տալիս ընտրութեան անելու, գործակալն առաջարկեց ընտրողներին, որ նրանցից ամիս մէկը դադարի քուէներով առաջարկէ չորս թեմականներ, որի հետեւանքն այն եղաւ, որ առաջարկեցան 16 թեմականներ: Արանցից առաջին չորսը, որոնք ձայների համեմատաբար առաւելութիւն ունէին, ընդունվեցան քուէարկվելի թեմականներ: Այսպիսի այս չորս թեմականների քուէարկութիւնը դարձեալ դադարի քուէարկութեամբ (թերթիկներով, վաւերացրած գործակալի ստորագրութեամբ) և ձայների առաւելութեամբ ընտրվեցան երկուսը, այն է պ. Զարմայր Արվանեան 50 ձայով, ընդդէմ 3-ի, և պ. Արշակ Գրիգորեանց 31 ձայով, ընդդէմ 22-ի: Երբ նախագահը յայտնեց ընտրութեան հետեւանքը, դահլճում անմիջապէս լսվեցան ընտրողների և հանդիսականների կեցցէն և ծափահարութիւնները: Երբ արդէն ընտրողական թերթը բոլոր ընտրողները ստորագրել էին, պ. Արվանեան խօսք խնդրելով նախագահից մի կարծ ձառով զիմեց ընտրողներին և նորահայտվեան հետ բացարձակ կերպով յայտնեց, թէ լինելով «Մշակ» հետևող և նրա զաւարտանքի դաւանող, իմ ձայնը Թիֆլիսում կը տամ այն մարդուն, որը պաշտպանում է Խրիմեան հայրիկին և Արիստակէս Սեդրակեանի թեմականութիւնը և եթ ընտրողները չեն ցանկանայ այդ, նրանք միջոց ունեն հնց այս քուէիս փոխել իրան և մի ուրիշ ուղղութեան մարդ ընտրել: Բայց նա դեռ չէր վերջացրել իր խօսքը, դարձեալ լսվեցան միաբերան կեցցէ և ծափահարութիւններ: Հանդիսականների մէջ եղան և շարունակեցան, որոնք այդ խոստովանութիւնը անտեղի համարեցին, ասելով որ չայդ իր, պատգամաւորի, գործն է և ինչ կարիք կայ այդպէս պարզ յայտնել ընտրողներին այս ինչ կամ այն ինչ թեմականութիւն անունը: Սակայն, ինչ կասկած, որ դա անհիմն և նոյն լիակ անմիտ նկատողութիւն է, բայց որոնք ընտրողական ուղղութիւնը և պատգամաւորի պարտաճանաչութիւնը ստիպում է միշտ հարցը այդպէս պարզ դնելու: Պէտք է անել այնպէս և այն որ առհասարակ ընտրութեան և քուէարկութեան վերաբերեալ բոլոր կանոններն ամենայն ճշդութեամբ իրագործվում էին: Ընտրող

ՆԱՄԱԿ ԱՂՍՏԱՅԱՅԻՑ

Փետրվարի 11-ին Աղստաֆա կայարանն ընկած է մի մեծ և ընդարձակ տափարակի վրա և ունի մօտաւորապէս 50 տուն բնակիչ: Բնակիչները գրեթէ բոլորն էլ ծառայողներ են, որոնց մեծ մասը կազմում են երկաթուղու կայարանի ծառայողները: Այստեղ կան պօստ-հեռագրական, էլեկտրոկայի և մի ուսումնալիք ընկերութեան գրասենեակներ: Կան և մի քանի առեւտրական հասարակ գրասենեակներ, որոնք վերջինից գրասենեակներից ընդունում են ապրանքներ և կոմիսիայով ուղարկում Նրեան, Կարս, Ալեքսանդրոպոլ և ուրիշ քաղաքներ: Այստեղի հայտարարութիւնը կազմված է հայերից, ռուսներից և վրացիներից, մասամբ և փղերաթիւթի թուղբերից, որոնք պարտաւոր են միմյանց մասնաւորապէս ընտրելու:

Ամիս 7-ին, առաւօտեան, այստեղից դէպի Նրեան պոստը ճանապարհ դնելիս նկատուում են, որ մի պոստային զրապանակ (сумка) պակասում է: Խոյն և եթ սկսում են առեւել, բայց ոչ մի հետեւանք չեն հասնում: Չէ անցնում մի ժամ, և ահա երկաթուղու ջազմով կայարանից, որը գտնվում է բազուկ ճանապարհի վրա՝ հետադուր ևն այստեղի ժանդարմի անունով, թէ

այստեղի Աղտոտափայլից եկող ապրանքատար գնացքի մէջ զանազան մի պատուաւոր և դատարկ պատուարկներ զրոյացանալ: Ժամդարմը ստանալով այս հեռագրիկը, իսկոյն յայտնում է պատուարկի վարչութեան: այս բանում մեղադրում են պատուարկի թղթաբեր ծառայողին, որը գիշերները միշտ քնելու է եղել պատուարկային, չը նայած որ այնտեղ կար և գիշերապահ տեղիս չափարկները մէջը, որը ամբողջ գիշերը քնած է եղել: Այստեղից հեռագրում են Ղազար, որտեղից գալիս է ուստիկանապետը և սկսում են յիշեալ ծառայողի մեղքերը քննել: այդտեղից հանում են մի քանի չուղարկված նամակներ և մի հատ պատիկա, որան իսկոյն և եթ ընտարարում են և հեռագրում թիֆլիսի պատուարկի վարչութեան, որտեղից և նոյն իսկ օրը երկաթուղով գալիս է քննիչ: Քննիչները չարտեսակվում է: Ինչպէս պատահում են այդ գրապահակի մէջ եղել է ընդամենը 74 բուլբուլ թղթապարս և մի քանի հասարակ նամակներ, որոնք Բագրից պիտի հասնէին Գլխիշան: Եղանակները մեղանում այժմ գարնանային են, չարտեսակ տաք եղանակներ են լինում, միմիայն մի անգամ ձիւն եկաւ, այն էլ իսկոյն հալվեց, բայց, ինչպէս որ պատահում են կառապանները, Սուխոյ-Ֆոնտանից մինչև Գլխիշան կայարանի ճանապարհը ծածկված է անգին բարձրութեան ձիւնով, որտեղ կառքերով երթնելովները դադարած է, միմիայն սահանքներով են երթնել կում:

Այստեղի հասարակութեան մէջ արդէն ստորագրութիւնը բացված է յունվարի 6-ի աղետի դահիւր համար և հաւաքված է մի փոքրութիւն դուրս: Կինական միջոցների դնելը շատ թանկ է, առաւելապէս այժմ, հացի առաջին տեսակի ֆունտը այժմ 5 կոպ., երկրորդին—3 կոպ., ոչխարի մսի ֆունտը՝ 10 կոպ., տաւարինը՝ 8 կոպ., հալած իւղի ֆունտը 30 կոպ.:

Ա. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, փետրվարի 14-ին

Ո՛վ է պ. Դանիէլ Տէր-Ջաքարեան, որը «Արձագանք» մէջ յայտնում է, թէ Չուղարկված երկուցու մէջ ամսիս 2-ին ընտրութիւնները կատարվել են օրինաւոր կերպով:

Այդ պարտի սակում ժողովուրդը ամենայն աշխուշութեամբ էր վերաբերվել զործին, թէ և մի խումբ մարդիկ, որոնց մէջ և մի օմն Լ. աշխատում էին ծխականների միտքը պղտորել:

Զարմանալի է, որ վախում են ամբողջ ազգանունը տպուկուց: Չուղարկված երկուցու մէջ օրը ես էի՝ Ստեփան Լիսիցեան:

Ընտրութիւնները ինձ համար հետաքրքրական էին դառնում այդպիսով:

Ժամի 9-ից երեք ժամուկ անցել էր, երբ եկաւ երկուցու, արդէն երգում էին «Տէր-Ողորմեան»: Մի ժամուկ ժամից յետոյ պատարապը վերջացաւ: Քահանայի որդին սկսեց դուրսը կանգնածներին ներս հրաւիրել երկուցու, Հաւաքված էր մօտաւորապէս 25—30 մարդ: Քահանան փոքրիկ ճառով յորդորեց ժողովուրդի ազգասիրութիւնը և այնուհետև սկսեց բաժանել թիւերիցները, չը ստուգելով արդեօք ներկայ եղողները բոլորն էլ ծխականներ են, թէ ոչ:

Ես ստիպվեցայ յայտնել հ. նախագահին, որ յայտարարված էր, թէ ընտրութիւնները սկսվելու են ժամի 12-ին: «Գու՛ն հիլ հաւ Հազիւ հազ սրանց կտեղ երբիլ ենք, հիմա ուղիւմ ես, որ գնան»։—«Ես այդ ասում եմ, որպէս զի երկրորդ անգամ ստիպված չը լինի ժողովուրդը ընտրելու, քանի որ ս. առաջնորդը կարող է այդպէս վաղ սկսված ընտրութիւնը անվավեր համարել»։ «Ի՜նչ էք մէջ մտնում, սկսեց աղապակել տիրացուն, ժողովուրդի կամքով չէ: Երբ ուղիւմ է, այն ժամին կը սկսէ»։ «Աղա-՛ջան, գործի մարդիկ ենք, բան ու գործը թողած էկել էինք, բան չուէին, ինչիկի կեսօր ո՛վ է մուսափ տալիս: Էս էլ վար էկել լինք, սրանց խաթրու է», լսվեցան ժողովուրդի միջից ձայներ: Միտակներով մի քանիսը պահանջում էին, որ համաձայն յայտարարութեան կատարվի ընտրութիւնը: Սկսվեց վիճաբանութիւնը: Ետեքը դուրս եկան գաւթիկ: Այսպիսի մի կէս ժամ անցաւ:

Տիրացուն ժամի 11-ը չը կար դու, որ նորից երեք երկուցու դռներում և ներս հրաւիրեց դուրս եկածներին: Պ. Գր. Դանիշարեանցին չէր թող տալիս մտնել երկուցու, ասելով, թէ ծուխ

չէ: Մերումի մահտեւին բարկացած մի առ մի սկսեց լինել, թէ ինչ է արել այս տաճարի և ապա քահանայական դասի համար 30 տարվայ ընթացքում: Միայն ուստիկանութեան միջամտութիւնը վերջ դրեց այն աղվակի տեսարանին, որը այդ առիթով տեղի ունեցաւ այդտեղ հաւաքված ժողովուրդի, տիրացուի և պ. Դանիշարեանի մէջ:

Ընտրութիւնները վերջացան ժամի 12-ին, հէնց այն ժամանակ, երբ թիւերն արդէն վերջին կէսը դեռեւ և մօտակապ տնակի պատուհանների ապակիները զրդաղցրեց: Կատարված քուէարկութիւնների ապօրինութիւնից վրդովված՝ ծխականներից մի ութ հոգի զբաղւած մարդիկ այդտեղ և եթ բողոք գրեցին: Գրաւ մէջ ասված էր, թէ ընտրութիւնը սկսվել է 10 ժամ 50 րոպէ. մասնակցողների ծուխ լինելը և թիւը որոշված չէր, թիւերիցները սկզբից և վերջը՝ ստանալուց յետոյ նախագահը չէ հաշուել: մի քանիսն երկու երկու թիւերիկ էր տուած, անգրադմաների համար գրեւ լու ոչ ոք չէր նշանակված: տիրացուն թիւադրում էր, որ գրեն Տէր-Գանիշարեանի, Բէհուլութեան, Եւանգելիանի և Սիմոնեանցի անունները կամ ինքն էր դրանց տեղ դրում և այն, և այն:

Տիրացուն, որը իսկապէս նախագահում էր, խելով այդ բողոքը սկսեց կարգաւ և վրացերէն թարգմանել: Այնուհետև առաջարկվեց, որ իրանք էլ մի թուղթ շինեն, թէ ընտրութիւնը սկսել են ժամի 11-ին իրանց կամքով, իրանց վճռով: Այդպէս էլ արին: Գրեցին և ստորագրեցին: (Այժմ չեմ հասկանում, թէ այդ 11-ին ինչպէս 1/4 ես առեկացաւ մի շաբաթվայ ընթացքում): «Իսկ որ թիւերիցները չենք համարել, ինչ կայ: Ահա այստեղ են, կը հաշուենք, հէնց այդքան մարդիկ էլ մասնակցել են»։ Հաշուեց և իսկոյն մտցրեց իր արձանագրութեան մէջ: Բողոքագիրը 7—10 ստորագրութիւններով տարվեց՝ առաջնորդարանը: Ժողովուրդի մեծ մասը անգրադաւ էր:

Այժմ իմանում եմ, որ յիշեալ տիրացուի ազգանունը պ. Դանիէլ Տէր-Ջաքարեան է: Տեղեկութիւններ հաւաքեցի և երեք, որ իր փեսայ տէր-Գրեւ՝ վանքի եկեղեցու միաբան քահանայի հօտ է (սա է պատկի, որդիքը միտակ, տունը օրհնել, սրա ցուցակի մէջ ես կայ), և իբրեւ եկեղեցու ուսուցիչն պաշտօնէս է, մտցրած է շատատի մէջ: Ուստի, ըստ հրահանգի, նախ իրաւունք չունէր Չուղարկված երկուցու ընտրութիւններին մասնակցել, որովհետև այդտեղի քահանան (իր հայրն է) չէ հովուում իրան և երկրորդ, որ չէր կարող և ոչ մի եկեղեցու մէջ ընտրվել, քանի որ հոգեւորական է և նշանակված է իսկ հոգեւորականների ցուցակի մէջ:

Ետո օրինաւոր ընտրութիւն: Չեմ յիշում և այն, որ հէնց ընտրութիւնները վերջանալուն պէս բողոքագրողները մասնակցածներին մէջ մատնացոյց արին երկու-երեք անգամահաններին, որոնք կարմիրով ամբողջ ետեւ թաղ կացան:

Անկասկած աշխատողներն իրանց նպատակին հասան և կը մարտեն. հրաւիրում ենք թիւիս ս. առաջնորդի ուշադրութիւնը այս տողերի վրա:

Ստեփան Լիսիցեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, փետրվարի 19-ին

Լսում ենք, որ Հաւաքարի ա. Լուսաւորիչ եկեղեցում նշանակված է վերջնաւորութիւն փետրվարի 2-ի ընտրութեան փոխարէն:

Մենք, այդ եկեղեցու ներքոյ ստորագրած պատգամաւորներս, հրապարակով բողոքում ենք այդ վերջնաւորութեան դէմ, որովհետև առաջին ընտրութիւնը եղել է միանգամայն կանոնաւոր:—Ընտրութեան մասնակցել են 46 ծխականներ, որոնք իրանց ազատ կամքով ընտրութիւն են կայացրել, և այդ ընտրութիւնը վաւերացրել են թէ ծխականները և թէ նախագահող քահանան իրանց ստորագրութիւններով:

Մի քանի օրից յետոյ միայն ընտրութեան դէմ բողոքել են երկու ծխական միայն, այն է Սպանդար Սպանդարեան, որը մի քուէ է ստացել, և եկեղեցու երեսփոխը, որն ինքը մասնակցել է ընտրութեան:

Եթէ ընտրութեան ժամանակ եղել է որ և է դեղծում, որի դէմ չէ բողոքել ոչ նախագահող ոչ ծխատէր քահանան, այն ժամանակ պէտք է պատմվեն նոյն այդ նախագահող և ծխատէր քահանանը, և ոչ թէ ծխականները, որոնք ընտրութիւնը կայացրել են առաջնորդական հրահան-

գի, և նախագահող քահանայի ցուցմունքների համաձայն:

Պատգամաւորներ՝ Ա. Մէլիք-Ալվաղեան, Գարեթիէ Խիւանեան, Սարգիս Մանուկեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՕՍԿԱՎԱՅՑ ստացանք հետեւեալ հրաւերը. «Ներկայ 1892 թւին լրանում է յայտնի բանաստեղծ Սմբատ Դանիշարեանի ուսուցչութեան երեսնամեակը. այդ առիթով Մոսկվայի հայ հասարակութիւնը վճուէ է առաջիկայ ապրիլի 9-ին տօնել նրա մանկավարժական և դրականական գործունէութիւնը: Կարգադրիչ յանձնաժողովը հրաւիրում է բանաստեղծի տաղանդը յարգողներին և վաղեմի աշակերտներին մասնակցել այդ տօնակարգութեանը: Ուղերձներ, չնորհաւորական նամակներ և հեռագրեր կարելի է ուղարկել յանձնաժողովի անդամ պ. Յովհաննէս Տէր-Յակոբեանին հետեւեալ հասցեով: Москва, Покровка, Лялинъ пер., д. Струве.»

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ բեր- շիւրերը. 1) «Դրեմի Ս. Խաչի վանք», աշխատանքից խորէն ծայր. վարդապետ Ստեփանէ: Բրօշուրը տպված է Պետերբուրգում, 1891 թւին և արժէ 30 կոպէկ. 2) Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան», հրատարակութեան Միտարանի, արտատպված է «Արարատ» ամսագրից ներկայ 1892 թւին և տպված է վաղարշապատում: 3) Գրամական հաշիւ Բագրի հայոց Մարգարիտական ընկերութեան վանք 1891 թւին:

Յօդուս Ուսուստանի սովեհներին հրատարակվող գրքերի թւում, ի միջի այլոց, իր վրա ուշադրութիւն է դարձնում մօսկվաքանկ իրաւաբան Գրիգոր Զանչեանի (Гр. Джанишев) գիրքը «ИЗЪ ЭПОХИ ВЕЛИКИХЪ РЕФОРМЪ» վերնագրով: Պ. Զանչեան շատ բեղմնաւոր գրող է մի և նոյն ժամանակ համոզված գործիչներից է, որը երբեք չէ փոխել իր ուղղութիւնը: Նա հանգուցեալ կայսր Ալեքսանդր II-ի ժամանակի վերանորոգութիւնների ամենամեղեւադ պաշտօններից մինն է, և ահա նրա այդ նոր գիրքն էլ նուիրված է՝ ճորտերի աղատութեան, մարմնի պատժի վերացման, ցէնզուրական վերանորոգութեան, նոր դատաստանի և այլ հարցերին: Գիրքը տպված է ներկայ թւին Մոսկվայում և արժէ 1 րուբլի: Ինչպէս Զանչեանի բոլոր գրութիւնները, նրա այդ նոր աշխատութիւնն էլ կարդացվում է մեծ հետաքրքրութեամբ և նոյն իսկ յափշտակութեամբ:

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեղ գրում են. «Ամսիս 14-ին տեղիս ուսումնարանի դահլիճում կայացաւ սիրողների երկրորդ ներկայացումը: Խաղացին երկու հայերէն և մի վրացերէն փողովներ: Օրիորդ Գայանէթարեանց «Գիշերվայ սաբըր խէր է» պիէս ստանում շատ լաւ կատարեց Մարթայի դերը: Ուսումնարանն այժմ ունի գեղեցիկ բնօժ ու դեկորացիաներ և ժողովուրդը սիրով է յաճախում ներկայացումները: Սիրողները մտադիր են տարվայ մէջ մի քանի ներկայացումներ տալ: Այս անգամ դահլիճը կատարելապէս լի էր: Շնորհակալութեան արժանի է հայր Եսայեանց, որը ամեն ջանք է թափում բարեգործական նպատակներով ներկայացումներ գլուխ բերելու»:

«Տարադ» շաբաթաթերթում կարդում ենք, որ ս. սինօզը յարգելով Թիֆլիսի եկեղեցիների ծխականների խնդրքը, կանոնաւոր է համարել կաթողիկոսական ընտրութեան համար ծխական պատգամաւորների ընտրութիւնը:

Մենք տեղեկացանք հաստատ աղբիւրներից, որ Էլմիածին սինօզը հրամայել է թիւիս առաջնորդին չը կատարել իր մտադրված եկեղեցական վերնորոգութիւնները:

Տէր Գիւտ քահանայ Աղանան և մի ինչ որ պարոն Սպարապետեան «Արձագանք» լրագրում յանդիմութիւն ունեն ուրանալ, որ փետրվարի 12-ին գնացել էին Բօգ գիւղը Կուսիսի շրջանի գաւառական պատգամաւորական ժողովի վճիռը քանդելու համար: Նրանցից առաջինը հաւատացնում է, որ գնացել էր քննութիւն անելու կատարված ընտրութիւնների մասին, իսկ երկրորդը իբր թէ իր կալուածքն այցելելու: Սակայն ճշմարտութիւնն այս է. նրանք գնացել են Բօգ

գիւղը, ճանապարհի վրա գտնված վաշալակ գիւղից էլ մի երկու հոգի իրանց հետ վերցնելով կանչել էին մօտակապ գիւղից էլ մի երկու երեք մարդ, Բոգ գիւղում գտնված, նախկին ընտրութիւններին մասնակցել եղած մի քանի մարդկանց էլ ժողովեցին,—և այդպիսով նոր ընտրութիւն կայացրին 19 հոգով, այն ինչ առաջին ընտրութիւնը կայացաւ 43 անձանց, այսինքն 11 շրջակայ գիւղերի ներկայացուցիչների մասնակցութեամբ: Եւ ահա նոյն Սպարապետեան նախ ընտրել տուեց, ապա Գիւտ քահանայի ջանքով թիւում մի ինչ որ գիւղացուն էլ ընտրութեան և այդ տեսակ մեծ յաղթութիւնն անելու յետոյ վերադարձան Թիֆլիս: Առաջվայ ընտրութիւններում, որոնց մասնակցեցին 43 ընտրողներ Լեւոն Ղորղանեան և Նիկողայոս Տէր-Ղևոնդեան միաձայն էին ընտրվել, իսկ նոր արած ընտրութեան ժամանակ Սպարապետեան ստացաւ 11 ձայնից միայն 13 ձայն, իսկ նրա ընկեր գիւղացին 19 ձայնից միայն 10 ձայն: Սակայն ինչ պատճառը, որ այժմ Գիւտ քահանան և Սպարապետեան ազգանունով պարոնը ուրանում են իրանց արածը,—որովհետև Թիֆլիս վերադառնալով իմացան թէ Էլմիածին սինօզից մի հեռագր է ստացված, որով խոստովանում արգելվում է կամայական կերպով որ և է վերնորոգութիւն անելը:

Շաբաթ օր, 15-ին փետրվարի, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ պարահանդէս յօդուս հայ թատրոնական ֆօնդի: Ինչպէս յայտնի է այս տարի հայոց թատրոնը գէֆիցիտ է ունեցել և ահա արդից մի պարահանդէս այդ գէֆիցիտը ծածկելու նպատակով ժողովարանի դահլիճը լի է զարդովեղանքով: դահլիճում կիսովներ էին չլինված, որտեղ զանազան զովացուցիչ խմբերն էին ծախում տիկին Կիրակոսեան, օրիորդ Իշխանուհի Ամատունի, և այլն: Իսկ պարահանդէսի տանտի կինն էր տիկին Եսայեան: Պարահանդէսի ընդհանուր արդիւնքն եղաւ մօտ 1600 րուբլի:

Թեմական առաջնորդ Մամբրէ եպիսկոպոսը ինչպէս լսվում է, դիտաւորութիւն ունի քանդել Թիֆլիսի եկեղեցիներից մի քանիսն: մէջ կատարված ընտրութիւնները: Եւ ահա այս օրինակ ծխականները ուղարկեցին սրբազան Տեղաւային մի հեռագիր 600 ստորագրութեամբ, խնդրելով որ սինօզը թող չը տայ վերնորոգութիւնները: Այժմ Էլմիածինց հեռագրով պատասխան է ըստացված, որով հրամայվում է թեմական առաջնորդին դադարեցնել վերնորոգութիւնները:

ՔԱՐՎԱՆԱՐԱՅՑ գիւղից մեղ գրում են. «Ամսիս 13-ին կատարվեց Ղազարի առաջին մասի գաւառական պատգամաւորների ընտրութիւնը: Ընտրվեցան ձայների առաւելութեամբ՝ Յովհաննէս Ալիկանեանց և Յովհաննէս Վարդանեանց: Գործակալ քահանան, որը նախագահում էր ժողովին, ընտրեց երկու զբաղւած մարդիկ, որոնք անգրադեսներին փոխարին պէտք է գրէին, բայց ժողովականները տրոսնայ յայտնեցին և պահանջեցին որ իրանք իրաւունք ունենան ընտրել երանք իր շրջ երկու մարդիկ, ասելով որ իրանք չեն հաւատում քահանայից ընտրված երկու մարդկանց: Ժողովականները միաձայն յայտնեցին իրանց փափագը տեսնել կաթողիկոսական դահլի վրա իրլի ման հայրիկին, կամ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին»:

Ղազարի կողմնից մեղ գրում են փետրվարի 15-ից հետեւալը. «Եղանակը փոխվեց, հոնի ծառերը արդէն բացվել էին, բայց այսօր ձիւն եկաւ: Ահաւարակ այս տարի ձմեռը շատ մեղմ է անցնում մեզանում»:

«Карсъ» լրագրը հաղորդում է, որ այս տարվայ ապրիլի 14-ին Կարսում Երեմիի նահանգական դատարանի քրեական բաժինը պէտք է ջըննէ Սարգիս Կուկունեանցի, Սահակ Թարութիւն նեանցի, Կոստանային Լիսինեանի և այլ 40 հայերի դործը, որոնք մեղադրվում են թէ մի խումբ կազմելով, սպանութիւններ են կատարել և ընդգրկեցել են իշխանութեան ներկայացուցիչներին: Գատը կը տեւ 10—15 օր: Նախագահելու է Միլանի նահանգական դատարանի նախագահ, պ. Բակալու:

Փետրվարի 14-ին, Տեառնընդառաջի տօնը, կատարվեց Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի տարեկան

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Типографія Канцел. Главннач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 433.